Հարգելի գործընկերներ,

Սույնով տեղեկացնում ենք, որ «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրի չորրորդ և հինգերորդ փուլերի շրջանակում ծրագրի մեկնարկից մինչև այժմ դիմած լիցենզավորված արևային կայանների վերաֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները հնարավոր է գերազանցեն ծրագրի վարկային միջոցները՝ առկա բոլոր դիմորդների կողմից ծրագրի պահանջները բավարարելու դեպքում:

Այդ իսկ պատճառով, տեղեկացնում ենք հետևյալ վերջնաժամկետների մասին.

1. **Նոր հայտի ներկայացում** նոր, կառուցվող կամ գործող արևային կայանների վերաֆինանսավորման նպատակով՝ **փետրվարի 25, 2022թ**.:

2. Արդեն իսկ **ներկայացված հայտերի** (2021թ-ին ներկայացված և ընդունված) **անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում** ըստ ստուգաթերթի պահանջների՝ **մարտի 11, 2022թ**:

3. **Նոր հայտերի** (ներկայացված 2022 թվականի հունվարի 1-ից մինչև փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում) **անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում** ըստ ստուգաթերթի պահանջների՝ **ապրիլի 15, 2022թ**.:

Բոլոր ներկա և հնարավոր հայտատուներին խորհուրդ է տրվում առաջնորդվել վերոնշյալ վերջնաժամկետներով:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ վերոնշյալ վերջնաժամկետներին համապատասխան հայտերի ներկայացումը դեռևս չի երաշխավորում Ծրագրի շրջանակում վերաֆինանսավորումը, քանի որ վերաֆինասավորման որոշումը կայացվում է հիմք ընդունելով նվազագույն տեխնիկական պահանջների, նախագծի գնահատման, բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության և այլ չափանիշներին համապատասխանությունը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԳՀՀ ԾԿԳ